ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021թ թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, 10-րդ, և 27-րդ կետերի պահանջներով,

հիմք ընդունելով Պալատի երիտասարդական խորհրդի անդամ Սվետլանա Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 3600) դիմումն իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

նկատի ունենալով խորհրդի անդամի թափուր մնացած տեղը 2024 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից համալրելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով փաստաբան Աննա Աթոյանի (արտոնագիր՝ թիվ 3562) համաձայնության առկայությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ Սվետլանա Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 3600) լիազորությունները,

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ նշանակել **Աննա Աթոյանին** (արտոնագիր՝ թիվ 3562)՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Հարութ Ակլունց

22 հոկտեմբեր 2026թ.
թիվ 700-Ա
ք. Երևան